ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 դեկտեմբերի 2020 թ. N 36 ANQA-2020/36

ԵՐԵՎԱՆԻ Մ.ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան
Գործունեության հասցեն՝	Կորյունի 2, Երևան, 0025, Հայաստան
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	**4 տարի ժամկետով ինստիտուցիոնալ հավատարմագրում, 27.02.2015-27.02.2019**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 24.12.2020 թ.-ի Հանձնաժողովի նիստում քննարկեց Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (այսուհետ՝ ԵՊԲՀ), ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԵՊԲՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով Երևանի պետական բժշկական համալսարանի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և համալսարանի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	19 ապրիլ 2018
բուհի ինքնավերլուծության ներկայացում	01 մարտ 2019
փորձագիտական այցի իրականացում	20 մայիս 2019
փորձագիտական զեկույցի ներկայացում	04 հոկտեմբեր 2019
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	18 նոյեմբեր 2019

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը1:

Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար է գնահատվել **«Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշը:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը կրթական, գիտական և կլինիկական ուղղվածության բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն առողջապահության ոլորտի որակյալ կադրերի պատրաստումն է՝ միտված հանրության առողջության պահպանմանը, ամրապնդմանը և բարելավմանը»:

ԵՊԲՀ-ն 2015 թվականին անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, որի արդյունքում համալսարանին շնորհվել է հավատարմագրում 4 տարի ժամկետով: ԵՊԲՀ-ն կազմել է թերությունների վերացման ծրագիր փորձագիտական զեկույցում առկա խորհրդատվությունների հիման վրա: 2017 թվականին ԵՊԲՀ-ն ՈԱԱԿ-ին է ներկայացրել վերհանված խնդիրների լուծմանն ու գործընթացների բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրի կատարողականի միջնաժամկետ վերլուծություն: ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է թերությունների վերացման ծրագրի միջնաժամկետ մշտադիտարկումներ 2017 և 2019 թվականներին:

1. ԵՊԲՀ-ի ՄԿԾ-ները համահունչ են համալսարանի առաքելությանը այն առումով, որ համալսարանը պատրաստում է մասնագետներ, որոնք բավարարում են առողջապահության ոլորտի աշխատաշուկայի պահանջներին: Խորհրդատվությունների հիման վրա իրականացվել է համեմատական վերլուծություն. համեմատվել են ավելի քան 25 երկրի առաջավոր փորձը, ինչպես նաև համեմատվել են WFME և եվրոդիրեկտիվի չափորոշիչները, կատարվել են փոփոխություններ ուսումնական պլաններում և վերանայվել են կրթական ծրագրերը: ԵՊԲՀ-ն իրականացրել է գնահատման ձևերի բազմազանեցում և կարևորում է գործնական հմտությունների գնահատումը:

Նախորդ հավատարմագրումից հետո ԵՊԲՀ-ի կողմից ձեռք բերված սեփական կլինիկան, գերազանցության և սիմուլիացիոն կենտրոններն ապահովում են պրակտիկ և հետազոտական միջավայր ուսանողների համար: Ընդհանուր առմամբ ԵՊԲՀ-ում առկա է

մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր. մարդկային ռեսուրսները և ուսումնական բազան ապահովում են ՄԿԾ-ների արդյունավետ իրականացումը, ինչի միջոցով էլ ուսանողները ստանում են պրակտիկ կարողություններ: ԵՊԲՀ-ն ունի հետազոտող բարձր որակավորում ունեցող մշտական դասախոսական անձնակազմ, որը հետևում է համալսարանի առաքելությանը և ռազմավարական նպատակներին: Ուսանողների ամենօրյա մասնագիտական առաջընթացն ապահովվում է ՀՀ տարբեր կլինիկաներում աշխատող պրակտիկ ոլորտի դասախոսների կայունացած անձնակազմը, որոնք քաջատեղյակ են առողջապահության ոլորտի առաջանցիկ պահանջներին և խնդիրներին:

Ներդրված է միջազգային պահանջներին համահնչության համեմատական շեմային վերլուծության մեխանիզմ:

ԵՊԲՀ-ն հիմնականում իրականացնում է որակավորումների արժանահավատ շնորհման որակի ապահովում.

2. ԵՊԲՀ-ն Նախորդ հավատարմագրումից հետո բարեփոխել է ռազմավարական ծրագիրը /ՌԾ/: Կառավարման համակարգում տեղի ունեցած բարեփոխումները նպաստել են արդյունքահեն և կարիքների վրա հիմնված որոշումների կայացմանը, որը բերել է ուսումնական գործընթացի բարելավմանը, ռեսուրսային բազայի համալրմանը, ՄԿԾ-ներում գործնական և հետազոտական բաղադրիչի ավելացմանը:

ՌԾ-ի դրույթների համաձայն սահմանվել է որակի ապահովման մշակույթի ձևավորման գործընթաց: Որակի ապահովման ուղղությամբ անհրաժեշտ գործընթացներն իրականացվում են ԵՊԲՀ-ի կողմից, որակի ներքին ապահովման գործընթացները գտնվում են հիմնականում անընդհատ բարելավման նպատակով պլանավորման և իրականացման փուլերում, իսկ որոշ դեպքերում բարելավման փուլերում:

Որակի մշակույթը բավարար լայն ներգրավում չի ապահովում որակական առաջխաղացում ապահովելու համար: Որակի ապահովման գործընթացները դեռևս չեն ծառայում բոլոր ոլորտների համահունչ և արդյունավետ զարգացմանը:

ԵՊԲՀ-ում ընդհանուր առմամբ իրականացվում է արդյունքահեն կառավարում, որն հիմքեր է ստեղծում բուհի կայուն զարգացման համար.

3. Նախորդ հավատարմագրումից հետո գրանցվել է որոշակի առաջընթաց՝ հետազոտական և միջազգայնացման գործընթացներում, որոնք ապահովում են բուհի զարգացումն ու միտված են ԵՊԲՀ-ի ճանաչելիության բարձրացմանը միջազգային դաշտում: ԵՊԲՀ-ն նշագրել է հետազոտության ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն որոշ ուղղություններով, բայց հետազոտությունները դեռ չեն կրում առաջանցիկ բնույթ: Որդեգրվել է ուսանողներին և դասախոսներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու որոշակի քայլեր, բացվել են նոր հետազոտական լաբորատորիաներ, սակայն ուսուցման և հետազոտության կապը դեռևս ամրապնդման կարիք ունի, որը պետք է դիտարկել ԵՊԲՀ երկարաժամկետ ռազմավարության համատեքստում:

ԵՊԲՀ-ում միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը ընդհանուր առմամբ աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը և բուհի զարգացմանը.

4. Առկա են միայն մասնակի թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, առկա են առաջխաղացման օրինակներ, կառավարման համակարգն աջակցում է փոփոխություններին: Փորձագիտական զեկույցում նշված թերությունները և ռիսկերը կառավարելի են և պահանջում են հետագա երկարաժամկետ զարգացում:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի ներկայացրած ծրագրով, պլանավորված բարելավումները իրատեսական են և հիմնականում ճիշտ են ընկալվել փորձագիտական խմբի կողմից բարձրացված խնդիրները: Թերությունների վերացման ծրագիրը որոշ շտկումների դեպքում կարող են բերել որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 6 /վեց/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.

   ա) **«Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

   բ) բուհի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի քանակական և որակական ցուցիչներ ունենալու պահանջը,

   գ) բուհի կողմից իրականացվող գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների և նախատեսվող ֆինանսական միջոցների չափի հստակեցման անհրաժեշտությունը,

   գ) Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու համալսարանի հավակնությունների տեսակետից՝ միջազգային փորձագետի գործընկերային գնահատման արդյունքները:
3. Հատուկ ուշադրություն դարձնել.

   ա) ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,

   բ) շրջանավարտների ամփոփիչ ատեստավորմանը՝ նախատեսել մագիստրոսական թեզի պաշտպանություն, հատկապես այն մասնագիտությունների դեպքում, որոնք իրականացվում են երկաստիճան (բակալավրիատ/մագիստրատուրա) կրթական համակարգով,

գ) հետագա զարգացումն ապահովելու համար միջազգային մասնագիտական ոլորտի /աշխատաշուկայի/ և միջազգային չափանիշների ուսումնասիրմանը և ՄԿԾ-ներում հաշվի առնմանը,

դ) որակի մշակույթի ամրապնդմանը և Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում ցիկլի լիարժեք իրականացմանը,

ե) առաջանցիկ և կիրառական հետազոտությունների իրականացմանը:

4. Դիմել ԵՊԲՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ծրագրային հավատարմագրման համար:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին զրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել համալսարանի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2020 թ., դեկտեմբերի 24
ք.Երևան